ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

<<ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>>
ՊՓԲԸ

РА, Лорийская обл.,Ванадзорская Поликлиника 1, ул. Мясникян 17
Vanadzor Polyclinic 1 SCJSC Lori Region, RA

✉ ք. Վանաձոր, Մյասնիկյան 17 ☏ 2-04-14, 4-43-50

«2» 09 2024թ. ԹԻՎ 201

ՈՐՈՇՈՒՄ

<Աննարկա> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՎԼՊ-ԳՀԱՊՁԲ-24/20

Համաձայն ՀՀ Պետական վերահսկողական ծառայության 06.08.2024 թ. թիվ Ե/1828-24 գրության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ-ն 2024 թվականի հուլիսի 20-ին «Աննարկա» ՍՊ ընկերության հետ կնքվել է ՎԼՊ-ԳՀԱՊՁԲ-24/20 ծածկագրով բժշկական սարքավորումների մատակարարման պայմանագիր:

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ -ն ՝ ղեկավարվելով Պայմանագրի 8.3 կետի պահանջով, ինչպես նաև վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է պայմանագիրը: Ընդ որում, Ընկերությունը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի օգոստոսի 28-ին :

Ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և 2-րդ մասով, այն է լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, **որոշում եմ** ՝

1. < Աննարկա> ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ տնօրեն՝ *Ա. Դարբինյան*